ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 8 -ին, N 237 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԵՐՆՋԱՏԱՓԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վ. Ղուկասյանի 2024 թվականի հուլիսի 4-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Երնջատափի Ե. Չարենցի անվան անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդան Ղուկասյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 8-ից օգոստոսի 9-ը ներառյալ:
2. Վարդան Ղուկասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Երնջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Նունե Միքայելյանին:
3. Վարդան Ղուկասյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 12-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.07.2024 17:38:55 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457